



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի №__Ա
քաղ. Երևան

**«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈՒԳԱՆՔ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՐԱԿՑՎԱԾ
ՀԵՌԱԽՈՍՍԱԿԱՊԻ «ՆԱԽԸՆՏՐԵԼԻ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԶԵՂԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի օգոստոսի 28-ի №335Ա որոշմամբ «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի (այսուհետ՝ «Նախընտրելի» սակագնային փաթեթ) բաժանորդային վճարը սահմանվել է 1300 դրամ/ամիս (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը),

բ) Ընկերությունը, համաձայն իր պաշտոնական ինտերնետային կայքում (<http://beeline.am/>) հրապարակված տեղեկատվության, «Նախընտրելի» սակագնային փաթեթը մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը բաժանորդներին (հաճախորդներին) առաջարկել է 1100 դրամ/ամիս բաժանորդային վճարով՝ Հանձնաժողովի սահմանած սակագնի նկատմամբ կիրառելով 200 դրամի չափով զեղչ,

գ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սակագնային կարգավորման ենթակա ծառայության սակագնի զեղչումը կարող է կիրառվել Հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո,

դ) Ընկերությունը «Նախընտրելի» սակագնային փաթեթի բաժանորդային վճարը զեղչելու վերաբերյալ առաջարկություն չի ներկայացրել Հանձնաժողով և զեղչը կիրառել է առանց Հանձնաժողովի հաստատման,

ե) Հանձնաժողովը 2018 թվականի հոկտեմբերի 3-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դրույթի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությանը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 3-ի N°ԱԲ-2740Ս գրությամբ,

զ) Ընկերությունը 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N°396/18-Մ11 գրությամբ հայտնել է, որ զեղչված 1100 դրամ/ամիս բաժանորդային վճարի կիրառումը պայմանավորված է տեխնիկական խնդիրներով, այն է՝ նոր ներդրված համակարգի տեխնիկական թեստավորման ընթացքում հայտնաբերված խնդիրները թույլ չեն տվել «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի համար գործընթացը լիարժեք ավտոմատացնել և միակ լուծումը եղել է «Բազային» սակագնային փաթեթի վրա բաժանորդների նախկին բաժանորդային վճարի պահպանումը՝ «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի հավելյալ ծառայությունները ակտիվացնելով: Հաշվի առնելով նշվածը՝ Ընկերությունը խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը և «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի զեղչված բաժանորդային վճարը սահմանել 1100 դրամ/ամիս (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով,

է) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերության կողմից խախտվել է Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և վերջինիս ներկայացրած պարզաբանումները վարչական վարույթի կարճման հիմք չեն,

և հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածը և 63-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման համար Ընկերությանը տուգանել երկու միլիոն դրամ գումարի չափով:
2. Հաստատել «Նախընտրելի» սակագնային փաթեթի զեղչված բաժանորդային 1100 դրամ/ամիս (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) վճարը՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝
 - 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
 - ա. սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը.

բ. սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԸ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան

-----2018թ.